ասացուածքներով: Ասլանի նոյն տեսակ պատասխանները ստիպեցին սրբազանին փոխել իր խօսակցութեան ձեւը:

— Դուք եւ Վարագ այցելեցիք, այնպէս չէ՞, պարոն բժշկապետ, — հարցրեց նա, — ինչպէ՞ս գտաք այդ վանքը եւ այնտեղի նոր հիմնարկութիւնները. տեսնոեցա՞ք արդեօք Հայրիկի հետ:

— Տեսնոեցայ եւ շատ բաւական մնացի, — ասաց Ասլանը: — Նրա վանքը մի գեղեցիկ օրինակ պէտք է համարել, որ եթէ կղերը կմասնակցէ ժողովրդի դաստիարակութեան գործին, ահա այդ ձեւով պէտք է մասնակցէ:

— Այդ իմ փափագելի ցանկութիւնն է, պարոն բժշկապետ: Իմ ջանքերը դեռ բոլորովին չեն սպառոել Վարագի վրայ: Ես աշխատում եմ եւ պիտի շարունակեմ աշխատել, եթէ միջոցները ինձ թոյլ տան, իմ վիճակի մէջ գտնոած բոլոր վանքերին նոյն ձեւը տալ: Մեր վանքերը, ժամանակների դժբախտ հանգամանքներից, այժմ շատ եւ շատ թշոառ դրութեան մէջ են: Իմ բոլոր ջանքը այն է՝ բարձրացնել նրանց իրանց անկեալ դրութիւնից:

Պէտք է վերին աստիճանի ցած կեղծաւորութիւն համարել, որ Հայրիկի եւ նրա վանքի ամենամեծ թշնամին այդպէս էր խօսում: Նա, որ ամէն գաղտնի եւ յայտնի միջոցներ գործ էր դնում ոչնչացնելու Վարագայ բոլոր հիմնարկութիւնները, այժմ նրա փառքը եւ նախաձեռնութիւնը իրան էր վերաբերում: Բայց սրբազանը այդ մասին կարճ կտրեց, խօսքը փոխելով.

— Ես ձեզանով եւ ձեր ճանապարհորդութեան արկածներով այնքան գրաւոեցայ, որ բոլորովին մոռացայ իմ հիւրերին ծանօթացնել ձեզ: — Ահա դա, — նա ցոյց տոեց այնտեղ նստած քուրդ բեկին, — քրդերի մի մեծ եւ քաջ ցեղի գլխաւորն է, Շարիֆ-բեկը:

— Շատ ուրախ եմ ծանօթանալ, — ասաց Ասլանը ձեռքը մեկնելով քուրդ բեկին:

— Ամենապատուական մարդ է եւ իմ ամենալաւ բարեկամը, — առաջ տարաւ առաջնորդը: — Դրա շնորհիւ մեր եւ Պարսկաստանի սահմանագլուխները կատարեալ ապահովութիւն եւ հանգստութեան են վայելում: Տեղային քրիստոնեայ բնակիչների բարեխնամ պաշտպանն է եւ հովանաւորողը:

Ես իսկոյն ճանաչեցի քուրդ բեկին, երեւի Ասլանը ինձանից առաջ ճանաչել էր: Դա նոյն անձնաւորութիւնն էր, որին տեսանք սուրբ Տիրամօր վանքում, որտեղ եկել էր նա ուխտաւորներից գոյացած արդիւնքը բաժանելու Կարապետ հայր սուրբի հետ: Դա նոյն անձնաւորութիւնն էր, որի՝ Ասլանի մասին գրած մատնութեան նամակը անցեալ գիշեր կարդացինք տէր Եղի-